ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA#

#
#
07.04.2016թ.
281-ի 4

ՀՀ կրթության և գիտության նախարար
պարոն Լևոն Մկրտչյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մկրտչյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գտնվող կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակող կառույցները ներկայացրե՞լ են արդյոք “Անձնական տվյալների պաշտպանության” մասին ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ծանուցումը (օրենքի 23-րդ հոդված եւ 29-րդ հոդվածի 2-րդ մաս),
2. Խնդրում ենք տրամադրել “Անձնական տվյալների պաշտպանության” մասին ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ծանուցումն ուղարկած կառույցների ցանկը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան